ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Դաստիարակների մասնախմբի նիստ

Նիստը տեղի ունեցավ 2025-2026 ուստարվա հունվարի 29-ին:

Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանը:

Օրակարգում

1. Մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին (զեկուցող՝ Մ.Հարությունյան)
3. Արտադասարանական համագործակցության նպատակով խաղային մեթոդի կիրառում (զեկուցող՝ Մ.Հարությունյան)
4. Այլ հարցեր

Լսեցին՝

1. Մասնախմբի համակարգողի՝ Մ. Հարությունյանը ներկայացրեց հունվարի 29-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մ.Հարությունյանը զեկուցեց, որ կատարվել են նախորդ նիստի բոլոր որոշումները. Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ համագործակցության շրջանակում ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն ապրիլին կայանալիք հանդիպման վերաբերյալ:

Լսեցին՝

3. Մասնախմբի համակարգող Մ. Հարությունյանը ներկայացրեց հունվար ամսին տարրական դասարանների միջև իրականացված ուսուցողական խաղի արդյունքները, որն ուղղված էր երեխաների միջև համագործակցության և փոխօգնության ձևավորմանը: Ներկայացվեցին նաև մասնախմբի անդամների կողմից «Գույների աշխարհում» և «Բանակի օր» թեմաների շրջանակում իրականացված խաղ-վարժանքների արդյունքները:

Արտահայտվեցին

Տարրական դասարանների դաստիարակները նշեինց, որ դրական և արդյունավետ են գնահատում տվյալ փորձառությունը և նպատակահարմար են գտնում նմանատիպ նախաձեռնությունները շարունակական դարձնելը:

Ա. Գարեգինյանը խրախուսեց բանակի օրվան նվիրված փոքրիկ միջոցառմանը դաստիարակների ներգրավվածությունը: Շնորհակալություն հայտնեց Ա. Սադոյանին, Ն. Գևորգյանին, Ս. Դունամալյանին և Գ. Բեջանյանին իրենց մասնակցության և աջակցության համար:

Լսեցին՝

4. Քննարկվեց դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրի շրջանակում սովորողների համար թանգարաններ և/կամ թատրոններ կազմակերպված այցելությունների հարցը: Տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանը առաջարկեց ուսումնասիրել Երևանի թատրոնների առաջիկա ժամանակահատվածում նախատեսված ներկայացումների ցանկերը և առանձնացնել այն ներկայացումները, որոնք կարող են համապատասխանել սովորողների կրթական և անհատական կարիքներին, ինչպես նաև կազմել թանգարանների ցանկ, որտեղ իրականացվող այցելությունները կնլինի արդյունավետ և կնպաստի սովորողների զարգացմանը: Տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանը մասնախմբի անդամներին հորդորեց Թումանյանական օրերի կազմակերպման շրջանակում փետրվարի 19-ին իրականացնել գիրք նվիրելու միջոցառում դասարանների միջև:

Արտահայտվեցին

Թումանյանական օրերի շրջանակում դաստիարակների կողմից ներկայացվեցին տարբեր առաջարկներ, այդ թվում՝ Հ. Թումանյանի հեքիաթների հերոսներին նվիրված պաստառների պատրաստումը և դպրոցում համապատասխան հատվածի թեմատիկ ձևավորումը: Միաժամանակ նախանշվեցին իրականացվելիք աշխատանքների հիմնական ուղղությունները:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի հունվարի 29-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ դաստիարակչական աշխատանքների համակարգողի զեկուցումը և արդյունքը համարել բավարար:
3. Շարունակել և զարգացնել տարրական դասարանների միջև ուսուցողական խաղերի և խաղ-վարժանքների իրականացումը՝ հաշվի առնելով դաստիարակների դրական գնահատականները և արդեն ունեցած փորձառության արդյունավետությունը:
4. Մինչև Թումանյանական օրերի շրջանակում նախատեսվող միջոցառումների կազմակերպումն իրականացնելը քննարկումներ կազմակերպել դասարանների դասղեկների/դասվարների հետ՝ առաջարկվող միջոցառումների համապատասխանությունը սովորողների կարիքներին առավել համապատասխան պլանավորելու համար: Քննարկումների արդյունքները համաձայնեցնել մասնախմբի համակարգողի հետ, այնուհետև սահմանել պատասխանատուներին, հստակեցնել իրականացվող աշխատանքների ժամկետները և նոր միայն մեկնարկել աշխատանքները:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ **Մ. Հարությունյան**

Քարտուղար՝ **Ռ. Բաղալյան**

02.02.2026